# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104


«20» 08 2019թ. № 12/3285

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարության
գլխավոր քարտուղար պր-ն Ն. Հարությունյանին

Հարգելի պր-ն Հարությունյան

Ձեզ ենք ուղարկում կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայությունների մատուցման մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև կնքված 2019թ. օգոստոսի 16-ի թիվ 82-Ա, 83-Ա, 84-Ա և 85-Ա համատեղ հրամանների Ձեր օրինակները:

Առդիր՝ 4 (չորս) համատեղ հրաման, 4 (չորս) թերթ:

Հարգանքով՝

Տեղեկատվական անվտանգության և
կառավարական կապի գլխավոր վարչության
պետի ժ/պ

Ի. Մեյյան

Մուտք № 39/87-19
20 08 19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«16» 08 2019թ.
N 82-Ա

«__» ______2019թ.
N

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

Ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի N706-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Բյուջեների կատարման կարգի» 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2019թ. հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
2) կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
3) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
4) կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
5) կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը չի կատարում Ծառայությունների դիմաց բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4-րդ ենթակետի:

4. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
2) կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
3) իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը:

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի աշխատասենյակ | 1 X 225 000 | 225 000 |
| | կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ | 1 X 100 000 | 100 000 |
| | ընդամենը տարեկան վարձը | | 325 000 |
| | | | Երեք հարյուր քսանհինգ հազար դրամ |

4) բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ ԱԱԾ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

5) իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

6) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ**

____________ Ա. Հակոբյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար**

____________ Ա. Հարությունյան

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011018562
հվհհ 02698732

Կ.Տ.



ՀՀ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն
Ելից № 12/3234/ 18.02.19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«16» 08 2019թ.
N 83-Կհ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«____»________2019թ.
N

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայությունները դադարեցնելու մասին

Կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. 2019թ. հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի հունիսի 28-ի N24-Ա համատեղ հրամանը:
2. Հաստատել, որ սույն համատեղ հրամանն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ ԱԱԾ և ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի հունիսի 28-ի N24-Ա համատեղ հրամանով պարտք ու պահանջներ չկան:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ**

________ Ա. Հակոբյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար**

________ Հ. Հարությունյան

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011018562
հվհհ 02698732

Կ.Տ.

Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն ____________ հեռախոս՝ 1-99

ՀՀ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն
Ելից № 11/3235, 16.08.19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«16» 08 2019թ.
N 84-Ձհ

«____»________2019թ.
N

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայությունները դադարեցնելու մասին

Կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. 2019թ. հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N81-Ա համատեղ հրամանը:
2. Հաստատել, որ սույն համատեղ հրամանն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ ԱԱԾ և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N81-Ա համատեղ հրամանով պարտք ու պահանջներ չկան:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ**

_________ **Ա. Հակոբյան**

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար**

_________ **[illegible] Հարությունյան**

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011018562
հվհհ 02698732

Կ.Տ.



ՀՀ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն
Մուտք N 2/3236 16.08.19

| | |
|---|---|
| ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ |
| «16» 08 2019թ.<br>N 85-Ա | «____»________2019թ.<br>N |

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայությունները դադարեցնելու մասին

Կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. 2019թ. հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ մշակույթի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 26-ի N87-Ա համատեղ հրամանը:
2. Հաստատել, որ սույն համատեղ հրամանն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ ԱԱԾ և ՀՀ մշակույթի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 26-ի N87-Ա համատեղ հրամանով պարտք ու պահանջներ չկան:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ

__________ Ա. Հակոբյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար

__________ Ն. Հարությունյան

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011018562
հվհհ 02698732

Կ.Տ.

Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն __________ հեռախոս՝ 1-99

ՀՀ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն
Ելից № 12/3237, 16.08.19